


ԵՄ տարածաշրջանային քաղաքականություն



Նորայր Դանիելյան

ԵՄ տարածաշրջանային քաղաքականություն

*Եվրոպական տարածաշրջանային
քաղաքականությունը ընդհանուր
մարտահրավերները հնարավորությունների
վերածելու ներուժ ունի:*



- Տարածաշրջանային ֆոնդերից օգտվող ԵՄ տարածաշրջանների քարտեզը /2007-2013/: պատկերը՝ Եվրոպական Հանձնաժողով

Նպատակներ և գաղափարներ

ԵՄ տարածաշրջանային քաղաքականությունը ձգտում է նվազեցնել կառուցվածքային անհամաչափությունները ԵՄ տարածաշրջանների միջև, նպաստել հավասարակշռված զարգացմանը և խրախուսել բոլորի համար իրական հավասար հնարավորություններ:

Հիմնված

- համերաշխության
- տնտեսական և սոցիալական համախմբվածության սկզբունքների վրա:
- Ֆինանսական տարբեր գործողությունների, գլխավորապես Կառուցվածքային և Համերաշխության հիմնադրամների միջոցով:

Փաստեր

- Եվրոպական Միության տնտեսական արտադրանքի 43%-ը արտադրվում է իր տարածքի 14%-վրա՝ աշխարհագրական հնգանկյունը ձևավորված Լոնդոնի, Համբուրգի, Մյունխենի, Միլանի և Փարիզի միջև ԵՄ բնակչության 1/3-ի տունն է հանդիսանում:
- Օգնել աղքատ Եվրոպական տարածաշրջաններին ետ չմնալ նշանակում է, որ հարուստները ավելին պետք է վճարեն ԵՄ բյուջե, քան ետ ստանաում:

Գործնականում

- ԵՄ տարածաշրջանային քաղաքականությունը, նրա գործիքները և ծրագրերը լայնորեն կառավարվում են ապակենտրոնացված կերպով այն ազգային և տարածաշրջանային կառավարությունների կողմից, որոնց վերաբերում է:
- Յուրաքանչյուր ծրագիր մշակվում է կոլեկտիվ գործընթացում՝ ներգրավվելով Եվրոպական, տարածաշրջանային և տեղական հարթության վրա գործող մարմինների, սոցիալական գործընկերների և կազմակերպությունների քաղաքացիական հասարակությունից:

ԵՄ տարածաշրջանային քաղաքականությունը և ԵՄ ընդլայնումները

- ԵՄ տարածաշրջանային քաղաքականությունը ԵՄ ընդլայնումների համատեքստում կամ ընդլայնումների ազդեցությունը Տարածաշրջանային քաղաքականության վրա:

Միտումները 1985 / 2005

Ծրագրերի հիմնական կիզակետը

- Մարդկային ռեսուրսների զարգացում և արդյունավետ օգտագործում
- Մրցակցության և առաջընթացի ամրապնդում գիտելիքի վրա հիմնված տնտեսության ուղղությամբ:
- Հասարակական ծառայությունների և ենթակառուցվածքների բարելավումը որպես ազգային և տարածքային հավասարակշռված զարգացման նախապայման:

ԵՄ տարածաշրջանային քաղաքականության նպատակները

Հիմնվելով տարածաշրջանների Ներքին համախառն արդյունքի ԵՄ միջին մակարդակի 75%-ից ցածր լինելու վրա, տարածաշրջանները ընտրելի են.

- «Համապատասխանության» նպատակ
- մյուս բոլոր տարածաշրջանները կարող են հավակնել «Տարածաշրջանային մրցակցության և զբաղմունքի» նպատակին
- Տարածաշրջանների աշխարհագրական ընտրելիությունը «Եվրոպական տարածքային համագործակցության» նպատակ կետը վերաբերում է սահմանամերձ տարածաշրջաններին կամ տարածաշրջաններին, որոնք պատկանում են տրանս-ազգային համագործակցության տարածքներին:

ԵՄ տարածաշրջանային քաղաքականության գործիքների աջակցության ծրագրեր

TACIS - աջակցություն Հայաստանին մինչև 2006թ.

- աջակցություն անցմանը դեպի շուկայական տնտեսություն
 - շարունակական աջակցություն ինստիտուցիոնալ, իրավական և վարչական բարեփոխումներին
- Եվրոպական հարևանության քաղաքականությունը 2007թ.-ից ի վեր**

- ԵՄ Էրազմուս Մունդուս ծրագիրը արտերկրում կրթություն ստանալու այլընտրանքային ճանապարհ է -

Կրթական կամուրջ Հայաստանից



Անդրսահմանային համագործակցություն

- Եվրոպական հարևանության քաղաքականության անբաժանելի բաղադրիչ է Անդրսահմանային համագործակցությունը:
- Անդրսահմանային համագործակցության ծրագրերն ընդգրկում են
 - Արևելյան Եվրոպայի,
 - Անդրկովկասի
 - Միջերկրական ծովի ավազանի արևելյան և հարավային հատվածի, և երկրները:
- Հայաստանն ընդգրկված է ծովային ավազանի երեք ծրագրերից (Սև ծով, Միջերկրական ծով և Բալթիկ ծով) մեկում՝ Սևծովյան ավազանի ծրագրում:

ԵՄ Անդրսահմանային համագործակցության քաղաքականության հիմնական նպատակները

- Ապահովել կայուն զարգացում ԵՄ արտաքին սահմանների ուղղությամբ
- Կրճատել կենսամակարդակների տարբերությունը իր և իր սահմաններից դուրս գտնվող տարածքներում,
- Դիմակայել ԵՄ ընդլայնմանը հաջորդող մարտահրավերներին և օգտագործել նոր հնարավորությունները

Ծրագիրն ընդգրկում է երեք առաջնային ոլորտ

1. Ընդհանուր ռեսուրսներն օգտագործելու միջոցով Տնտեսական և սոցիալական զարգացման նպատակով անդրսահմանային համագործակցության խթանում
2. Շրջակա միջավայրի պաշտպանության և անվտանգության համար միջոցների և կարողությունների բաշխում
3. Սևծովյան ավազանում միասնական մշակութային միջավայրի ձևավորման նպատակով աջակցություն մշակութային և կրթական ցանցերին